ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ—ՔԱՂԼՈՒՍ ԲԱԺԻՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼԽՈԶ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ

374
Կ-21

ՅԵՐԵՎԱՆ 1934

ՀՍԽՀ-ՍՍՀ

52. 217

Սրբագրիչ՝ Դար. Հակոբյան

Գլավլիտ № 399, պատվեր 1045, տիրաժ 1000

Գեհարքաղ տպարան, Երևան, II Գնունի № 4

374
4-21
17 MAY 2013
0120-10

1. ԿՈԼԽՈԶԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Ակումբը, որպես քաղաքամասային աշխատանքի կենտրոնական բազա, կազմակերպվում է գյուղական միջավայրում և կուլտուր-քաղաքական աշխատանքի միջոցով բարձրացնում է կոլխոզնիկների, տնայնագործ կոոպերացիայի անդամների, մենատնտես աշխատավոր գյուղացիների կուլտ-քաղաքական մակարդակը, տանելով նաև պրոֆմիության անդամների (ՄՏԿ սովխոզների ու տեղական արտադրական բանվորների, լուսաշխատավորների, բժիշկների, գյուղատնտեսների, խորհրդային ու կոոպերատիվ աշխատավորների) կուլտ սպասարկումը։

Որպես խորհրդային իշխանության մասսայական պրոպագանդի և ագիտացիայի որգան, ակումբը հոգում է գյուղի աշխատավոր մասսայի սոցիալիստական դաստիարակման գործը։ Գյուղը սոցիալիստորեն վերակառուցելու և կոլխոզները կազմակերպչորեն ու տնտեսապես ամրացնելու գործում ոգնում են ՄՏԿ-ին, սովխոզներին և կոլխոզներին։

Կոլխոզակումբն իր վոզջ աշխատանքը կազմակերպում է այնպես, որ ամենորյա ոգնությամբ կարողանա նպաստել կոլխոզներին, սովխոզներին, ՄՏԿ-ին ու գյուղխորհուրդներին իրենց արտադրական պլանները ճիշտ և ժամանակին կատարելու գործին, ինչպես նաև կոլխոզների մեքենայացմանը, տնտեսության մեջ ագրոտեխնիկական—կուլտուրական մեթոդների կիրառմանը։ Կուլտ-մասսայական աշխատանքի միջոցով ամրացնում է հասարակական աշխատանքային դիսցիպլինան, լայնորեն ծավալում է սոցմրցումն ու հարվածայնությունը, արմատախիլ է անում պրոգուլներն ու պոկողականությունը և հետամնաց կոլխոզնիկների մեջ յերևան յեկող հիվանդոտ տրամադրությունները, ստեղծելով այնպիսի պայմաններ, որպեսզի հասարակական աշխատանքի միջոցով գյուղի աշխատավոր մասսաները, կոլխոզնիկներն ու մե-

նատնտեսներն ակտիվորեն մասնակցեն ընդհանուր քաղաքական-տնտեսական կամպանիաների կատարման գործին (հացի, գյուղատնտեսական այլ մթերքների և հումքի մթերում։ Ֆինանսական պլանների կատարում, խորհուրդների վերընտրում և այլն)

Այս կապակցությամբ կ. ակումբը տանում է հետևյալ աշխատանքները.

ա) Կուսակցության, կառավարության, շրջանային կազմակերպությունների և գյուղխորհրդի վորոշումները պարզաբանելու նպատակով կազմակերպում է մասսայական, խմբակային և անհատական ագիտացիա և պրոպագանդ։

Լուսաբանում է կապիտալիստական յերկրներում տարվող հեղափոխական պայքարի և Կոմինտերնի, Պրոֆինտերնի ու ՄՈՊՐ-ի գործունեությունը։ Կազմակերպում է Լենինիզմը. ընթացիկ մոմենտը և միջազգային հեղափոխությունն ուսումնասիրող քաղխմբակներ։

ՄԱՄ-ի (Մարտնչող Անաստվածների Միություն) բջիջների հետ միասին տանում է հակակրոնական լուսավորություն, կազմակերպելով զրույցներ, զեկուցումներ և դասախոսություններ։

բ) ՄՏԿ-ի ու սովխոզ բանվորների, կոլխոզնիկների և աշխատավոր մենատնտեսների արտադրական առանձին խմբակների համար կազմակերպում է ագրոտեխնիկական պարապմունքներ (զրույցներ, եքսկուրսիաներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ և այլն)։

գ) Անգրագիտության դեմ տանում է կազմակերպված պայքար։ Ոժանդակում է բոլոր անգրագետ-կիսագրագետ, մեծահասակներին գրագիտական դպրոցներն ու խմբակներն ընդգրկելու գործին, պայքարում է մաղումների դեմ և առնում է ռեցիդիվի առաջը։ Այս նպատակով կազմակերպում է ինքնազարգացման առանձին խմբակներ։ Մեծահասակ աշխատավորության ընդհանուր կուլտ-քաղաքական մակարդակը բարձրացնելու, տեխնիկային տիրապետելու նպատակով կազմակերպում է հատուկ խմբակներ և բանում է կարճատև կուրսեր։

դ) Խորհրդների ու կոլխոզվարչության ընտրության, ցանքսի, հացամթերման, փոխառության, ինքնահարկման, հեղափոխական տոների տարեդարձերի, պրոլետարական տոների, «բերքի կոլեկտիվացման որվա», «կոոպերացիայի որվա», «կարմիր բանակի որվա» և տնտեսական-քաղաքական այլ կամպանիաների ժամանակ տանում է կուլտ-մասսայական աշխատանք՝ նպաստելով այդ կամպանիաների հաջող ընթացքին։

ե) Սոցմրցման տախտակի (կարմիր և սև) միջոցով տանում է սիստեմատիկ հսկողություն՝ կոլխոզների, ՄՏԿ-ների, սովխոզների ու գյուղխորհուրդների արտադրական պլանների, ինչպես նաև պետական պարտավորությունների ճիշտ և ժամանակին կատարելու վրա։

զ) ԽՍՀՄ-ի պաշտպանությունն ամրացնելու համար Պաշը Ավիոքիմի բջիջների հետ տանում է ուժեղ պրոպագանդ (ռազմական գրականության, թերթերի ու ամսագրերի տարածում, նոր անդամների ներգրավումը Պաշը Ավիոքիմի բջիջների մեջ) Մինչզինակոչիկների և հավաքականներում կարմիր բանակ կանչվողների մեջ տանում է կուլտ-մասսայական քաղաքական աշխատանք, կազմակերպում է նրանց համար ռազմական գիտելիքների խմբակներ։

է) Ոժանդակում է գյուղխորհրդի սեկցիաների աշխատանքներն ամրացնելու գործին, իր վրա վերցնելով նրանց կուլտ-սպասարկումը (տեղեկատու բյուրո, կուսակցության և կառավարության վորոշումների մասսայականացում, թարմ գրականության և լրագրերի մատակարարում, ձրի կինո-ներկայացումներ, սեկցիաների անդամների ներգրավումը խմբակների և կուրսերի մեջ)։

ը) Կանանց (կոլխոզուհիների և մենատնտես աշխատավորուհիների) մեջ տանում է կուլտուրական առանձին աշխատանք։ Կազմակերպում է կանանց հատուկ ժողովներ, ուր քննության են առնվում գյուղխորհրդի, կոլխոզի ու կոոպերացիայի արտադրական պլաններն ու նրանց կատարումը։ Կուլտ-տնտեսական բնույթ կրող հարցերի շուրջը կազմակերպում են զրույցներ, դասախոսություններ, կինոնկարների ցուցադրում, ռադիո-լսարաններ և այլն։

Ապահովում են կանանց ընդգրկումը և ակտիվ մասնակցությունը գրագիտական դպրոցներում, կենցաղային բնույթ կրող, առողջապահական, հակակրոնական, գյուղատնտեսական, քաղաքական և այլ ինքնազարգացման խմբակներում ու հասարակական այլ կազմակերպությունների աշխատանքների մեջ (գյուղխորհուրդ կոոպերացիա և այլն)։

թ) Նպատակ ունենալով նոր կենցաղի շինարարական աշ-

խատանքներում յերևան բերելու աշխատավոր մասսայի ինքնագործունեությունը, կոլխոզ ակումբը գյուղխորհրդի կուլտ-սեկցիայի և կոլխոզի կուլտ-կենցաղային հանձնաժողովների հետ միասին անց է կացնում հատուկ պրոպագանդ՝ յերեխաների հասարակական դաստիարակության ուղղությամբ, պայքար ալկոհոլի դեմ, աշխատանքի սանիտարական պայմանների ամրացման և կուլտուր-կենցաղային կոոպերացիայի համար։

Միաժամանակ ոժանդակում է գյուղխորհրդին ու կոլխոզին՝ կազմակերպելու նախադպրոցական ու կենցաղային այլ հիմնարկներ (մանկապարտեզներ, մսուրներ, մանկհրապարակներ, քաղնիքներ և այլն)։ Բացատրական աշխատանք է տանում և ոգնում է կուլտ-կենցաղային հիմնարկների համար կադրեր պատրաստելու գործին։

ժ) Կոլխոզնիկների և մենատնտես աշխատավորների համար կազմակերպում է գեղարվեստական և ինքնագործունեության աշխատանքներ՝ ներկայացումներ, յերգ-յերաժշտություն, կենդանի լրագիր, ընտանեկան մասսայական ինքնագործ յերեկույթներ և նման հանգստի կուլտուրական այլ ձեռնարկումներ։

ի) Շրջիկ գրադարանների և գրքատարության միջոցով մասսայականացնում է գրականությունը։ Պատրաստում է կուլտ-ընթերցողների կադր։

լ) Ոժանդակում է պարտադիր ուսման լրիվ իրականացմանը, յերեխաների համար կազմակերպում է արտադպրոցական աշխատանքներ. նպաստում է գյուղական դպրոցները պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցելու գործին, ԼԿՅԵՄ բջիջների հետ միասին հատուկ աշխատանք է տանում պատանեկության մեջ և ոգնում է պիոներ կազմակերպությանը նրանց գծով տարվելիք կուլտ-քաղաքական աշխատանքներին։

Ծանոթություն.—Յերեխաների և կանանց մեջ տարվելիք աշխատանքների համար կ. ակումբի վարչությունը սահմանում է ամենորյա հատուկ ժամը և ունենում է համապատասխան պլան, ինչպես նաև հիմնում է կապառադիտական անկյուն, մանկական սենյակներ և կարմիր անկյուններ, վորոնք հանդիսանում են կ. ակումբի աժանմունքները։

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Կոլխոզ ակումբը կազմակերպվում է շրջանային լուսաժնի միջոցով, վորին նա անմիջականորեն յենթարկվում է։ Կ. Ակումբը հանդիսանում է տվյալ յենթաշրջանի (յեթե տեղում նման այլ հիմնարկներ կան) քաղլուս-մասսայական աշխատանքների բաղան։ Կուս., պետական ու հասարակական այլ կազմակերպությունների գծով տանում է կուլտ-մասսայական աշխատանք. կազմակերպում ու ղեկավարում է տվյալ յենթաշրջանի գյուղական վայրերում յեղած քաղլուս-ցանցը։

Ծանոթություն.—Յենթաշրջանի գյուղերում կազմակերպում է կարմիր անկյուններ, կուլտ-ընթերցողների ինստիտուտներ, վորոնք ղեկավարվում են ակումբի կողմից։

Կոլխոզակումբը մշակում է իր արտադրական պլանը, յելնելով գյուղի, կոլխոզի, ՄՏԿ և այլ հիմնարկ-կազմակերպությունների առաջ դրված քաղաքական-տնտեսական խնդիրներից։

Շրջանային լուսաժինները, նախորոք համաձայնության գալով ՄՏԿ քաղաժինների հետ, կազմակերպում են ՄՏԿ-ում հատուկ ակումբներ, վորոնք, քաղաժինների ղեկավարությամբ և յելնելով ՄՏԿ արտադրական պլաններից, տանում են կուլտ-մասսայական աշխատանք։

2. Կոլխոզ ակումբը, թե անմիջականորեն և թե կարմիր անկյունների ու կուլտ կազմակերպիչ ընթերցողների միջոցով, կուլտ մասսայական աշխատանք է ծավալում բրիգադներում, առանձին փոքր կոլխոզներում, գյուղակներում և այլն։

Ակումբը պարտավոր է տվյալ յենթաշրջանում կազմակերպել քաղլուսավարական այնպիսի ցանց (կարմիր անկյուն, կուլտ-կազմ. ընթերցողների ինստիտուտ), վորն ի վիճակը լինի լիովին սպասարկելու կոլխոզնիկներին և աշխատավոր մենատնտեսներին։

Հիշյալ ցանցն իր ղեկավարությունն ստանում է Կ. ակումբից։ Վերջինս տալիս է իր յենթակա ցանցին կազմակերպչական մեթոդական ցուցմունքներ և սահմանում է անհրաժեշտ հսկողություն։

3. Արտադրողականությունը բարձրացնելու նպատակով,

Կ. ակումբը հատուկ աշխատանք է ծավալում բրիգադների մեջ, որի համար յուրաքանչյուր բրիգադում ստեղծում է կուլտ-կազմակերպիչների վորոշ կադր։ Տարբեր արտադրական ճյուղերում, ուժեղ աշխատանք տանելու նպատակով, առաջ է քաշում կուլտ-ակտիվներ, վորոնց միջոցով տանում է քաղուս սիստեմատիկ աշխատանք։

Լայնորեն ծավալում է սոցմրցումն ու հարվածայնությունը. յերևան է բերում լավագույն հարվածային բրիգադներին և անհատներին, նրանց փորձը լուսաբանում է մամուլում, պատի թերթում, սոցմրցման տախտակի ու հարվածայինների համագումարների միջոցով. դրա հետ միասին նպաստում է պարգևատրման ֆոնդերի կազմակերպման գործին։

4. Կոլխոզ ակումբի և կուլտ-կրթական հիմնարկների (տարրական միջնակարգ, ցածր և միջնակարգ դպրոց, տեխնիկում, գրագիտական դպրոցներ և այլն) փոխհարաբերությունները քաղուս մասսայական աշխատանքների բնագավառում կայանալու յե հետևյալում։

Կ. ակումբը վորպես տվյալ յենթաշրջանի քաղուս աշխատանքի կենտրոնական բաղա, իր արտադրական պլանը կազմում է այնպես, վոր կարողանա համագործակցել վերը հիշված հիմնարկների հետ և տանել կոնտակտ աշխատանք։

Այս կապակցությամբ վերը հիշված բոլոր կուլտ-հիմնարկներն իրենց ներկայացուցիչներն են ունենում Կ. ակումբի վարչության մեջ, համաձայնեցնում են իրենց աշխատանքներն ակումբի արտադրական պլանների հետ, և

ա) Իրենց վրա յեն վերցնում քաղուս աշխատանքի վորևե բնագավառ (Ռ. Բ. Վ., հակակրոնական պրոպագանդ, Պաշը Ավիաքիմի)։

բ) Տանում են մասսայական աշխատանք, ոգտագործելով իրենց շենքերն ու կենդանի ուժերը։

գ) Ընդհանուր աշխատանքի պլանի համաձայն ոգնում են Կ. ակումբին, նրա կողմից կարմիր անկյուններում, դաշտում, բրիգադներում և այլ բնագավառներում տարվելիք աշխատանքներին։

5. Կ. ակումբը գործունեության մեջ է դնում կուլտ-արշավի սիստեմը, այս գործում ոժանդակություն ստանալով կուլտ ակտիվից։

Այս նպատակով ստեղծում է մշտական և ժամանակավոր կուլտ բրիգադներ, ագիտ խմբակներ և այլն։

Ինքնագործունեության սկզբունքի հիման վրա, Կ. ակումբը ներգրավում է ակտիվին աշխատանքի մեջ և ճշտորեն վորոշում է յուրաքանչյուր կուլտ մարտիկի կոնկրետ անելիքը։

Կուլտ-մարտիկներն առաջին հերթին հավաքագրվում են կոլխոզնիկներից, ՄՏԿ ու սովխոզների բանվորներից, զորացրված կարմիր բանակայիններից, կոմյերիտականներից, կին պատգամավորներից, ինչպես նաև ռասուցիչներից, միջնակարգ և միջնակարգից ցածր դպրոցների բարձր խմբերի աշակերտներից, տեխնիկումների ուսանողներից, բժիշկներից, գյուղատնտեսներից, անասնաբուժներից, տեխնիկներից։

Կուլտ-ակտիվի անդամներից կազմակերպվում են հատուկ բրիգադներ՝ անգրագիտության վերացման, գյուղատնտեսական արշավի, գեղարվեստական և այլ աշխատանքներ տանելու համար։

Նրանցից առանձնացվում են հատուկ բրիգադներ, վորոնք ղեկավարում են ռադիո լսարանները, սոցմրցումն ու հարվածայնությունը, դաշտում, խոտհարքում, բանջարանոցներում, մբթերակայաններում և այլ տեղերում տարվելիք աշխատանքները։

6. Կ. ակումբը, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ, հաճախակի ստուգման և յենթարկում քաղուս մասսայական գծով տարվող աշխատանքների ընթացքը, կազմակեկպում է մրցումներ և այլն։

7. Տնտեսական-քաղաքական և կուլտուրական շինարարության բնագավառում իր տարած աշխատանքների ժամանակ Կ. ակումբը հիմք է ունենալու կուսակցության և կառավարության կողմից արված հրահանգներն ու վորոշումները և ձեռք է առնելու այնպիսի միջոցառումներ, վոր այդ վորոշումները ժամանակին ու ճշտորեն կենսագործվեն։

8. Կ. ակումբներն իրենց կից ունենում են՝

ա) Գրադարան, վորից առանձին ֆոնդ է հատկացվում շրջիկ գրադարանի համար։

բ) Շրջիկ կինո՝ յերկնելով հնարավորություններից։

գ) Ռադիո-բարձրախոս՝ հարմար լսարանով։

դ) Տեղեկատու բյուրո, վորը ղեկավարվում է գյուղխորհրդի, կոլխոզի, ՄՏԿ, սովխոզի աշխատակիցների միջոցով, աշխատան-

քի մեջ ներգրավելով նաև ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և այլն։

ե) Պատի թերթ (նյութերի և բողոքի արկղներ)

զ) Հատուկ արկղ՝ հարց ու պատասխանի համար։

է) Ռազմական, սանիտարական, գյուղատնտեսական և բնագիտական անկյուններ

ը) Հատուկ անկյուն (ըստ կարիքի)՝ աղջային փոքրամասնության մեջ տարվելիք քաղաքաշինարարական աշխատանքների համար։

9. Կ. ակումբը հանդիսանում է ագրոտեխնիկ. պրոպագանդի բազա. այս կապակցությամբ նա միասնական ձեռնարկումներ է տանում կոլխոզների, ՄՏՐ-ների, հողաբաժնի, Գյուղացու Տան և հասարակական այլ կազմակերպությունների հետ։

Սրա համար ակումբն ունենում է՝

ա) Տեղական գյուղատնտեսական վերակառուցմանը համապատասխան բովանդակություն ունեցող գրականություն, ամսագրեր թերթեր։

բ) Ստեղծում է կուլտ ընթերցողների մշտական խմբակներ,

գ) Տասնորյա ամսաթ պլան՝ բարձրաձայն ընթերցանություն, վորը տարվում է թե հիմնարկի ներսում և թե բրիգադներում, անհատական խմբակներում, ընտանեկան շրջաններում և այլն։

Զրույցներ յեվ դասախոսություններ

ա) Ունենալ դասախոսությունների և զրույցների խմբակ (բրիգադ)։

բ) Իրազեկ լինել գյուղխորհրդի, կոլխոզի, սովխոզի և յենթաշրջանի այլ տարբերական հիմնարկի տարեկան, յեռամսյա և ամսական պլանին. հատուկ բրիգադի միջոցով ուսումնասիրել պլանի կատարման ընթացքը և այդ կապակցությամբ սիստեմատիկորեն կազմակերպել դասախոսություններ, զրույցներ և հարց ու պատասխանի յերեկոներ։

գ) Վորպես դասախոսներ ոգտագործել շրջկենտրոնի կարող մասնագետ ուժերին։

դ) Ակումբը զարդարել նորագույն պլակատներով, լոզունգներով և աղյուսակներով։

ե) Ունենալ շարժական դիագրամներ, վորով կարելի լինի պարզել տարվելիք կամպանիաների ճիշտ ընթացքը։

Եքսկուրսիաներ

ա) Կուլտ ակտիվից ունենալ եքսկուրսիաները ղեկավարող հատուկ անդամ։

բ) Եքսկուրսիաների համար մշակել աշխատանքի այնպիսի պլան, վոր տարվա բոլոր յեղանակներին (ձմեռ, գարուն, ամառ, աշուն) կարելի լինի ուսումնասիրել կոլխոզների, սովխոզների տնտեսական կազմակերպչական գործի դրվածքը և պլանների կատարման ընթացքը։ Եքսկուրսիաներին մասնակից դարձնել կոլխոզնիկներին, մենատնտես աշխատավոր գյուղացիներին ու գեղջկուհիներին։

Մասսայական ժողովներ

Դաշտավարական, անասնապահական, շինարարական բրիգադների համար կազմակերպել հատուկ ժողովներ, ուր զեկուցումների ու դասախոսությունների միջոցով քննության առնել կոլխոզ շինարարության ամրացման, բերքի բարձրացման, պտուղության հանդեպ ունեցած պարտականության կատարման և նման խնդիրներին վերաբերող հարցեր, ինչպես նաև արտադրական պլանների կենսագործման ընթացք։

Կոնսուլտացիոն տեղեկատու բյուրո

ա) Գյուղատնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ ունենալ հատուկ գրականության անկյուն։

բ) Մասնագետներից, հարվածայիններից, փորձված կոլխոզնիկներից և բանվորներից ստեղծել կոնսուլտանտների հատուկ խմբակներ։

գ) Կոնսուլտացիոն բյուրոյի և շրջկենտրոնի միջև պահպանել սերտ կապ։

Շրջիկ գրադարաններ

ա) Շրջակա գյուղերին թարմ գրականությամբ սպասարկելու և ընդհանրապես գրականությունը մասսային մոտեցնելու նպատակով ունենալ շրջիկ գրադարան։

բ) Նոր ստացված գրականության ցուցակը լայն հայտա-

բարել. ունենալ գրականության ցուցահանդես, նշանակել լավագույն ընթերցողների մրցում։

Ռադիո լսարաններ

ա) Ռադիո հաղորդումներին մասնակից դարձնել կոլխոզնիկներին, մենատնտես աշխատավորներին, ՄՏԿ ու սովխոզների բանվորներին և այլն։

բ) Հաղորդող կայան լինելու դեպքում ունենալ հաղորդող դասախոսներ։

Կինո

ա) Կինո սեանսների ժամանակ ապահովել աշխատավոր մասսայի ներկայությունը։ Նկարի ցուցադրման ընթացքում տալ մատչելի բացատրություն։

Ցուցահանդեսային աշխատանք

ա) Ցելնելով տեղական պայմաններից՝ ունենալ ագրոտեխնիկական մշտական անկյուն և ցուցահանդես կամ թանգարան։

բ) Շարժական աշխատանքի (դաշտում, բրիգադներում) համար ունենալ պլակատների կոմպլեկտ և աղյուսակներ։

գ) Կոլեկտիվացման ու բերքի որվա, գարնանացանի, աշնանացանի, բերքի հավաքման և այլ կամպանիաների կապակցությամբ կազմակերպել ժամանակավոր ցուցահանդեսներ։

9. Գյուղխորհրդներում, կոլխոզներում, գյուղերում, կարմիր անկյուններում ակումբներն· իրենց աշխատանքները տանելու յեն տվյալ վայրի հիմնարկ-կազմակերպության մեջ յեղած ազգության մայրենի լեզվով։

Խառն ազգություն ունեցող գյուղերում ակումբի վարչությունը քաղլուս աշխատանքները տանելու յե այնպես, որպեսզի ըստ ազգությունների կազմակերպվեն հատուկ խմբակներ և պարապմունքները տարվեն մայրենի լեզվով։

3. ԿՈԼԽ. ԱԿՈՄԲԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պլանավորված գործնական աշխատանք տանելու, կուլտակտիվի ինքնագործունեությունը յերևան բերելու և ողջ աշխատանքները ղեկավարելու համար կոլխոզ ակումբն ունենում է վարչություն, բաղկացած 7—9 հոգուց։ Վարչության կազմի մեջ մտնում են՝ ակումբի շտատային աշխատակիցները, կուս ու ԼԿՅԵՄ բջիջների, կոլխոզի, գյուղխորհրդի, ՄՏԿ-ի քաղբաժնի պրոֆմիության, կին պատգամավորուհիների և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք ընտրվում են համապատասխան կազմակերպության ընդհանուր ժողովում։

Ծանոթություն.—Վարչության ամբողջ կազմը քննության է առնվում կոլխոզի լայնացրած ժողովում, որից հետո հաստատվում է գյուղխորհրդի կողմից։

Վարչության նախագահը հանդիսանում է ակումբի վարիչը։ Վարչությունը վոչ մի մնայուն բյուրո կամ նախագահություն չի կազմակերպում։

2. Վարչության պարտականությունն է՝ կազմակերպել և ղեկավարել տվյալ յենթաշրջանի գյուղերի քաղլուս մասսայական ցանց ու նրա աշխատանքները, որի համար մշակում է տարեկան, յեռամսյակային, ամսական ու որացուցային միասնական պլան՝ ընդգրկելով բոլոր ոլորտներով տարվելիք աշխատանքները։

3. Վարչության յուրաքանչյուր անդամ ամրացվում է աշխատանքի որոշ բնագավառի և վերցնում է իր վրա կոնկրետ պարտավորություն, աշխատում է կոնսուլտացիոն - տեղեկատու բյուրոյում, ղեկավարում է կուլտ-բրիգադի աշխատանքները, անց է կացնում զրույցներ, դասախոսություններ, բարձրաձայն ընթերցանություն, այցելում է յենթաշրջանի գյուղերում գոյություն ունեցող կարմիր անկյունները, ստուգում և ցուցմունքներ է տալիս նրանց և այլն։

4. Վարչությունը ներքին հատուկ կանոնադրությամբ կարգավորում և սիստեմի տակ է առնում ակումբի ողջ աշխատանքները (աշխատանքի ժամերի սահմանում, հերթապահություն և այլն). կենդանի ոպերատիվ ղեկավարություն է ցույց տալիս կ· անկյուններին և պարբերաբար լսում է տարված աշխատանքների մասին զեկուցումներ (վարչության անդամների, կարմիր անկյան վարիչների և այլն)։

5. ակումբի ներքին կանոնադրությունը հաստատվում է գյուղխորհրդի կողմից։

5. Քաղուն մասսայական աշխատանքների վորակական ցուցանիշները բարձրացնելու և աշխատանքի լավագույն փորձը փոխանակելու նպատակով կատարում է ընդհանուր ամփոփում և յուրաքանչյուր յեռամսյակում առնվազն մեկ անգամ հրավիրում է մեթոդական լայն խորհրդակցություն՝ մասնակցությամբ կարմիր անկյան վարիչների, խմբակային ղեկավարների, կուլտակտիվի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ուր քննության են առնվում թե ընդհանուր քաղուս մասսայական և թե առանձին եյական բնույթ կրող խնդիրներ։

6. Կոլխոզ ակումբի վարչությունն իր տարած աշխատանքների համար հաշվետու յե լուսբաժնի, գյուղխորհրդի, կոլխոզնիկների և բանվորական ընդհանուր ժողովների առաջ։

Վարչությունը հաստատում է ակումբի վարչի կողմից լուսբաժնին ներկայացվելիք ամսական տեղեկագրերը։

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱ

1. Կոլխոզակումբը հիմնականում պահպանվում է տեղական բյուջեյով նախատեսվող գումարներով և այն հատկացումներով, վոր արվում են կոլխոզների, պրոֆ ու կոոպերատիվ կազմակերպությունների կողմից։

Նյութական բազան ուժեղացնելու նպատակով կոլխոզ ակումբը կազմակերպում է կուլտ հեկտար, վճարովի կինո, ներկայացումներ և այլն։

Հասարակական կազմակերպություններից ստացված ժամանակ գումարների ծախսումը Կ. ակումբը կատարում է տվյալ կազմակերպության գիտությամբ և համաձայնությամբ, վորը հաստատվում է գյուղխորհրդի կողմից։

Ծանոթություն.—1. ակումբներին արգելվում է անդամավճար գանձելը։
2. Կ. ակումբների կատարած դրամական ծախքերի ընդհանուր հսկողությունն, ինչպես նաև գույքի ու կահավորման պահպանման ստուգումը տարվում է շրջանային լուսբաժնի և գյուղխորհրդի կողմից, վորոնք մասնակից են դարձնում ստուգման աշխատանքներին նաև այն կազմակերպություններին, վորոնք ակումբին նյութական ոժանդակություն են ցույց տալիս։
3. Կարմիր անկյունները պահպանվում են կոլխոզների հաշվին, ստանալով հասարակական կազմակերպություններից ևս վորոշ նյութական ոժանդակություն։

5. Շ Տ Ա Տ

Կոլտնտեսային ակումբներն ունենում են հետեյալ անձնակազմը. — Առաջին և յերկրորդ տիպի ակումբները՝ վարիչ, մասսավիկ, տեխնիկական աշխատակից։

Յերկրորդ տիպի ակումբները՝ վարիչ, տեխնիկական աշխատակից։

Հաստիքները սահմանվում և հաստատվում են շրջանային գործկոմի, լուսբաժնի կողմից։ Աշխատավարձն ստանում են գյուղխորհրդից։

Վարիչը հանդիսանում է քաղուս մասսայական վողջ աշխատանքի կազմակերպողն ու պրոպագանդիստը։ Իր գործունեության ընթացքում կոնտակտ աշխատանք է տանում գյուղխորհրդի, ՄՏԿ, կոլխոզի, սովխոզի, պրոֆ և կոոպերատիվ ակտիվի հետ՝ ղեկավարություն ստանալով կուս շրջկոմից և լուսբաժնից։

Սոցիալիստական համատեղության կարգով, իբրև ոգնականներ և փոխարինողներ, առաջ է քաշում հարվածային կուլտ մարտիկներ և այսպիսով ամրացնում, ապահովում է աշխատանքի բոլոր ոլորտները։

ՀՍՍՀ-ՍՍՌ
Ս. ՄԱՍՏՈՑԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0226250

52. 217